ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2011թ. թիվ 212 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 10 ԱՊՐԻԼԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ,,ԱԶԱՏԱՄՈՒՏԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ'' ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ'' ԹԻՎ 28-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄԵՆՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի թիվ 1023-Ն որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ազատամուտի Առողջության առաջնային պահպանման կենտրոնի միջև 2011 թվականի նոյեմբերի 11-ին կնքված ,,Ազատամուտի առողջության առաջնային պահպանման կենտրոն'' ՓԲԸ-ին սեփականության իրավունքով շենք հանձնելու վերաբերյալ'' պայմանագրի 2.44 կետը

Ո ր ո շ ու մ եմ.

1. Ութ հազար յոթ հարյուր երեսունյոթ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման միջոցով ավելացնել ,,Ազատամուտի առողջության առաջնային պահպանման կենտրոն'' փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը՝ քառասուներեք միլիոն վեց հարյուր ութանասուն հինգ հազար դրամով:
2. ,,Ազատամուտի առողջության առաջնային պահպանման կենտրոն'' փակ բաժնետիրական ընկերության քառասուներեք միլիոն ութ հարյուր վաթսունհինգ հազար դրամ կանոնադրական կապիտալի ավելացված գումարի մեջ ներառել՝

հ/հ	Գույքի անվանումը	Ավելացվող գումարը /դրամ/	Բաժնետոմսերի թիվը	Մեկ բաժնետոմսի գինը /դրամ/
1	,,Ազատամուտի առողջության առաջնային պահպանման կենտրոն''ՓԲԸ-ի շենքը /169.4 ք.մ. տարածք/	43.685.0	8737	5000

3. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2008 թվականի ապրիլի 10-ի ,,Ազատամուտի առողջության առաջնային պահպանման կենտրոն փակ բաժնետիրական ընկերության հիմնադրման մասին'' թիվ 28-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 2-րդ կետի ,,36 (երեսունվեց) հատ 5000 (հինգ հազար) դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսեր'' բառերից հետո ավելացնել ,,և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի թիվ 1023-Ն որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ազատամուտի առողջության առաջնային պահպանման կենտրոնի միջև 2011 թվականի նոյեմբերի 11-ին կնքված ,,Ազատամուտի առողջության առաջնային պահպանման կենտրոն'' ՓԲԸ-ին սեփականության իրավունքով շենք հանձնելու վերաբերյալ պայմանագրի 2.4.4 կետի համաձայն հանձնված շենքի արժեքի չափով թողարկված և տեղաբաշխված 8737 (ութ հազար յոթ հարյուր երեսունյոթ) հատ 5000 (հինգ հազար) դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսեր:'' բառերը.

2) 5-րդ կետերը շարադրել հետևյալ նոր բովանդակությամբ.

,,5. Ընկերության կանոնադրական կապիտալի չափը սահմանել 43865000 (քառասուներեք միլիոն ութ հարյուր վաթսունհինգ հազար) դրամ, որը բաժանվում է 8773 (ութ հազար յոթ հարյուր յոթանասուներեք) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 5000 (հինգ հազար) դրամ անվանական արժեքով:'':

4. Հանձնարարել ,,Ազատամուտի առողջության առաջնային պահպանման կենտրոն'' ՓԲԸ-ի տնօրենին՝ սահմանված կարգով տալ ընթացք:
5. Որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

2011թ.,դեկտեմբերի 27
ք. Իջևան